



ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-3102, ԳՅՈՒՄՐԻ, ՊՈՒՇԿԻՆԻ Փ. 96, ՀԵՌԱԽՈՍ՝ (0312) 50622

JOURNALISTS' CLUB "ASPAREZ"

NON-GOVERNMENTAL ORGANIZATION

POUSHKIN STREET 96, GYUMRI, ARMENIA 3102, TEL: (0312) 50622

Email: nadia@asparez.am; <http://www.asparez.am> <http://www.publicdata.am>

ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի նախաձեռնած դատական գործերի մասին

Ակումբը դատական գործերը նախաձեռնում, հայցերով դատարան է դիմում այն համայնքապետերի դեմ, որոնք խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջները, չեն պատասխանում ԺԱԱ տեղեկության հարցումներին եւ/կամ չեն տրամադրում հարցված տեղեկությունները:

Դատական գործերի իրավիճակը 2018 թ. ապրիլի 08-ի դրությամբ

2017 թ. մշտադիտարկման համար ԺԱԱ տեղեկությունների գրավոր հարցումներին չպատասխանած 10 համայնքների ղեկավարների դեմ վարչական դատարաններ հայց ներկայացնելու համար մշակվել են տիպային հայցադիմումները: Համայնքապետերի դեմ հայցերը 2018 թվականի առաջին եռամսյակում ուղարկվել են դատարաններ:

Մասնավորապես.

- Տավուշի մարզ՝ Սարիգյուղ, Դիլիջան համայնքների ղեկավարների դեմ: Այդ հայցերը մուտքագրվել են դատարան 2018 թ.-ի փետրվարի 6-ին:
- Արմավիրի մարզի Ալաշկերտ, Ակնալիճ, Բամբակաշատ համայնքների ղեկավարների դեմ, այդ հայցերը մուտքագրվել են դատարան 2018 թ.-ի փետրվարի 5-ին:
- Շիրակի մարզ Հայրենյաց համայնքի ղեկավարի դեմ: Հայցը մուտքագրվել է դատարան փետրվարի 20-ին:
- ՇՄ Ախուրյան եւ Հոռոմ համայնքների ղեկավարների դեմ պատրաստած հայցադիմումները դատարան չեն տրվել, քանի որ նրանք հայցի օրինակները ստանալու հաջորդ օրը տրամադրել են հարցումով պահանջված տեղեկությունները:
- Լոռու մարզի Դեբետ համայնքի ղեկավարի դեմ հայցադիմում չի ներկայացվել, որովհետեւ 2018 թվականի մարտի 11-ին տեղի է ունեցել համայնքի ղեկավարի փափոխություն:
- Թվով 3 հարցումներ 2018 թվականի փետրվարի 8-ին ուղարկել են Լոռու մարզի Հրաթագյուղ, Արջուտ, Սարալանջ համայնքների ղեկավարներին: Արջուտ համայնքի ղեկավարը հարցմանը պատշաճ ժամկետում պատասխանել է: Հրաթագյուղ եւ

Սարալանջ համայնքների ղեկավարների դեմ պատրաստվել են հայցադիմումներ, որոնք կուղարկվեն 2018 թվականի ապրիլին:

Սարիգյուղ, Դիլիջան, Ալաշկերտ, Ակնալիճ, Բամբակաշատ համայնքների ղեկավարների դեմ ներկայացրած հայցադիմումները դատարանները մերժել են վարույթ ընդունել, հետևյալ պատճառաբանությամբ. «...հայցադիմումը ներկայացվել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձի կողմից, իսկ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ի մասի 4-րդ կետի համաձայն՝ Վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցադիմումը ներկայացրել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը»: Սարիգյուղ ու Դիլիջան համայնքի ղեկավարները հարցման պատասխանները ուղարկել են հայցերն ստանալուց հետո:

Կոշ համայնքի ղեկավարի դեմ ներկայացված հայցադիմումը 2018 թվականի փետրվարի 23-ին բավարարվել է, դատարանը պարտավորեցրել է Կոշ համանայքի ղեկավարին 3-օրյա ժամկետում տրամադրել իմ կողմից կատարված հարցման պատասխանները, ինչպես նաև փոխհատուցել 4000 (չորս հազար) ՀՀ դրամ, որպես պետական տուրքի վճար:

ՇՄ Հայրենյաց համայնքի ղեկավարի դեմ ուղղված դատական գործը ՀՀ վարչական դատարանի Գյումրու նստավայրի դատավորն ընդունել է վարույթ, կայացել է մեկ դատական նիստ, որին համայնքի ղեկավարը լինելով պատշաճ ծանուցված, չի ներկայացել, դատական նիստը անցկացվել է առանց նրա, երկրորդ դատական նիստի օր է նշանակվել մայիսի 3-ը:

Հաղորդագրության ավարտը